4.8 Կրոն կամ համոզմունքներ[220]

Այն դեպքում, երբ ԵՄ իրավունքը պարունակում է որոշ սահմանափակ պաշտպանության դրույթներ կրոնի կամ համոզմունքների հիմքով խտրականության դեպքերում, ՄԻԵԿ-ի շրջանակը զգալիորեն լայն է այս հարցում, քանի որ 9-րդ հոդվածը պարունակում է խղճի, կրոնի և դավանանքի ազատության ինքնուրույն իրավունք:

Օրինակ՝ *Ալուխեր Ֆերնանդեսը կամ Կաբալլերո Գարսիան ընդդեմ Իսպանիայի [Alujer Fernandez and Caballero García v. Spain]* գործում դիմումատուները բողոքում են, որ, ի տարբերություն կաթոլիկների, նրանք չեն կարողանում իրենց եկամտահարկի մի մասն ուղղակիորեն իրենց եկեղեցուն հատկացնել[221]: Ներկայացված փաստերի հիման վրա ՄԻԵԴ-ը գանգատն անընդունելի համարեց, քանի որ դիմումատուների եկեղեցին Կաթոլիկ եկեղեցու հետ նույն իրավիճակում չէր գտնվում, որովհետև նման պահանջ չէին ներկայացրել կառավարությանը, և քանի որ կառավարությունը Մայր աթոռի հետ փոխադարձ պայմանավորվածություն ուներ:

Օրինակ՝ *Շա'արե Շալոմ Վե Ցեդեկն ընդդեմ Ֆրանսիայի [Cha'are Shalom Ve Tsedek v. France]* գործում ներգրավված է հրեական մի կազմակերպություն, որը հաստատում էր, որ իր անդամներին պատկանող ռեստորաններում և մսի խանութներում վաճառվող միսը կոշեր է[222]: Դիմումատուն, համարելով, որ սպանդն իրականացնող հրեական կազմակերպությունը այլևս չէր պահպանում կոշեր մսի խիստ ցուցումները, դիմել էր պետությանը ծիսական սպանդն իր կողմից

220 ՄԻԵԿ-ի 9-րդ հոդվածի շրջանակների վերաբերյալ բացատրությանը կարելի է ծանոթանալ ԵՄ Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների ուսուցման կայքում՝ Մարդոկ, «*Մտքի, խղճի և կրոնի ազատություն*», Մարդու իրավունքների մասին ձեռնարկ, թիվ 2, 2007թ. [Murdoch, *Freedom of Thought, Conscience and Religion*, Human Rights Handbooks, թիվ 2, 2007], հասանելի է հետևյալ կայքում. http://www.coehelp.org/mod/resource/view.php?inpopup=true&id=2122:

221 ՄԻԵԴ, *Ալուխեր Ֆերնանդեսը կամ Կաբալլերո Գարսիան ընդդեմ Իսպանիայի [Alujer Fernandez and Caballero García v. Spain]* (dec.) (թիվ 53072/99), 14 հունիսի, 2001թ.:

222 ՄԻԵԴ, *Շա'արե Շալոմ Վե Ցեդեկն ընդդեմ Ֆրանսիայի [Cha'are Shalom Ve Tsedek v. France]* [ՄՊ] (թիվ 27417/95), 27 հունիսի, 2000թ.:

կազմակերպելու թույլտվություն ստանալու համար: Պետությունը մերժել էր դիմումը՝ հիմնավորելով, որ հրեական համայնքի ներկայացուցիչների թիվը բավարար չէ, և որ արդեն գոյություն ունեն ծիսական սպանդանոցներ: ՄԻԵԴ-ը համարել է, որ այս հանգամանքներում կազմակերպության նկատմամբ փաստացի անբարենպաստ վերաբերմունք առկա չի, և որ այն կարող էր պահանջվող մեթոդներով պատրաստված միսը ձեռք բերել այլ աղբյուրներից:

Թե իրականում ինչ են նշանակում կրոն կամ հավատ հասկացությունները, որոնք պաշտպանություն են ենթադրում «Աշխատանքում և մասնագիտության մեջ հավասար վերաբերմունքն ապահովելու համար ընդհանուր հիմքեր սահմանող հրահանգի» և ՄԻԵԿ-ի շրջանակներում, դեռևս չեն պարզաբանվել ԱԵԴ-ի և ՄԻԵԴ-ի կողմից, սակայն մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել ազգային դատարանների կողմից[223]:

Օրինակ՝ *Այլինգտոն Լոնդոնի քաղաքային խորհուրդն ընդդեմ Լադելի (Ազատության միջամտում) [Islington London Borough Council v. Ladele (Liberty intervening)]* գործում Միացյալ Թագավորության վերաքննիչ դատարանը պետք է եզրակացություն տար այն մասին, թե արդյոք դիմումատուն, որը զբաղվում էր ծնունդների, ամուսնությունների և մահվան դեպքերի գրանցմամբ, ենթարկվել էր կրոնի կամ համոզմունքների հիման վրա խտրականության, երբ քաղաքացիական միությունը գրանցումը մերժելու համար նրա նկատմամբ կարգապահական միջոցառում էր իրականացրել[224]: Նրա մերժումը հիմնված էր իր քրիստոնեական համոզմունքների վրա: Դատարանը որոշեց, որ սա կրոնական ուղղակի խտրականություն չէ, քանի որ նվազ բարենպաստ վերաբերմունքը կապված չէր նրա կրոնական համոզմունքների հետ, այլ իր աշխատաքային

223 Կրոնի և համոզմունքների ազատությունը պաշտպանվում է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածով, 1966թ, (ԵՄ և ԵԽ բոլոր անդամ պետություններն այս դաշնագրի մասնակիցներն են), տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն թիվ 22, հոդված 18 (մտքի, խղճի և կրոնի ազատություն):

224 *Այլինգտոն Լոնդոնի քաղաքային խորհուրդն ընդդեմ Լադելի (Ազատության միջամտում) [Islington London Borough Council v. Ladele (Liberty intervening)]* [2009] EWCA Civ 1357, ՄԹ Վերաքննիչ դատարան, 12 փետրվարի, 2010թ.:

պարտականությունները չկատարելու հետ: Անուղղակի խտրականության բողոքը նույնպես մերժվել էր Վերաքննիչ դատարանի կողմից, որը նշել էր, որ դա Քաղաքային խորհրդի առաջնային հանձնառությունն է հավասարության և բազմազանության խթանման ուղղությամբ, համայնքային և ներպետական շրջանակներում, և քաղաքականությունը չի միջամտում դիմումատուի նման համոզմունքներ ունենալու իրավունքին: Վերաքննիչ դատարանը նաև համարեց, որ հակառակն եզրակացնելու դեպքում առաջանում է այլ հիմքով խտրականության խնդիր՝ կապված սեռական կողմնորոշման հետ: Դատարանն ընդունել է, որ անձի խտրականության չենթարկվելու իրավունքը պետք է հավասարակշռվի համայնքի նույն իրավունքի հետ:

Մի շարք գործերում, որոնք վերաբերում են ՄԻԵԿ-ի շրջանակներում կրոնի և համոզմունքների ազատության հիմնական իրավունքին, ՄԻԵԴ-ը հստակեցրել է, որ պետությունը չի կարող նախատեսել, թե ինչ է նշանակում կրոն կամ համոզմունք և որ այդ հասկացությունները պաշտպանում են նաև «աթեիստներին, ագնոստիկներին, սկեպտիկներին և այլոց»՝ միաժամանակ պաշտպանելով նրանց, ովքեր որոշել են «ունենալ կամ չունենալ կրոնական համոզմունքներ և դավանել կամ չդավանել կրոնը»: Այս գործերը նաև նշում են, որ կրոնը կամ համոզմունքը էապես անձնական է, սուբյեկտիվ և պարտադիր կապված է ինստիտուցիոնալ հավատքի հետ[225]: Նոր կրոնները, ինչպիսին Սաենտոլոգիան է, նույնպես օգտվում են պաշտպանությունից[226]:

ՄԻԵԴ-ը «համոզմունքի» գաղափարը մշակել է ՄԻԵԿ-ի թիվ 1 արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված կրթության իրավունքի համատեքստում, որը նշում է, որ պետությունը պետք է հարգի ծնողների՝ իրենց զավակների համար իրենց կրոնական և փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն ապահովելու իրավունքը:

225 ՄԻԵԴ, *Փրկության բանակի մոսկովյան մասնաճյուղն ընդդեմ Ռուսաստանի [The Moscow Branch of the Salvation Army v. Russia]* (թիվ 72881/01), 5 հոկտեմբերի 2006թ., կետեր 57-58, ՄԻԵԴ, *Բեսարաբիայի մետրոպոլիտեն եկեղեցին ընդդեմ Մոլդովայի [Metropolitan Church of Bessarabia and others v. Moldova]* (թիվ 45701/99), 14 դեկտեմբերի, 2001թ., կետ 114, ՄԻԵԴ, *Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի [Hasan and Chaush v. Bulgaria]* [ՄՊ] (թիվ 30985/96), 26 հոկտեմբերի 2000թ., կետեր 62 և 78:

226 ՄԻԵԴ, *Մոսկվայի Սաենտոլոգիական եկեղեցին ընդդեմ Ռուսաստանի [Church of Scientology Moscow v. Russia]* (թիվ 18147/02), 5 ապրիլի, 2007թ.:

«Իր հիմնական իմաստով «համոզմունքներ» ["convictions"] բառն ինքնին «կարծիքներ» ["opinions"] և «գաղափարներ» ["ideas"] բառերի հոմանիշ չէ, որոնք՝ որպես այդպիսին, օգտագործվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածում, որը երաշխավորում է խոսքի ազատությունը: Այն ավելի մոտ է 9-րդ հոդվածում նշված «հավատ» ["beliefs"] բառին (ֆրանսերենում՝ «համոզմունք» ["convictions"]), որը ցույց է տալիս կարծիքներ, որոնց հասնում են ճանաչողության, լրջության, կապակցվածության և կարևորության մակարդակի»[227]:

Վերջերս ՄԻԵԴ-ը բախվել էր կրոնական ազատության հետ կապված գործերի, որոնցում պետությունները ցանկացել են պահպանել աշխարհիկությունը և նվազագույնի հասցրել իրենց հասարակություններ-ի վրա կրոնի հատվածավորող ազդեցությունը: Այստեղ Դատարանն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել պետության հայտարարած նպատակին, այն է՝ կանխել անկարգությունները և պաշտպանել այլոց ազատություններն ու իրավունքները:

Օրինակ՝ *Կյոզը և այլոք ընդդեմ Թուրքայի [Köse and others v. Turkey]* գործը վերաբերում էր հագուստի նկատմամբ պահանջներին, որն արգելում էր աղջիկներին դպրոցում գլխաշոր կրել: Գանգատում նշվում էր, որ այս արգելքը կրոնական խտրականություն է, քանի որ գլխաշորի կրումը մահմեդական կրոնական գործելակերպ է[228]: ՄԻԵԴ-ն ընդունեց, որ հագուստի հետ կապված կանոնները որոշակի կրոնական պատկանելության հետ կապված չէին, այլ ուղղված էին դպրոցներում չեզոքության ու աշխարհիկության ապահովմանը, որն իր հերթին կանխում էր անկարգությունները, ինչպես նաև պաշտպանում էր այլոց սեփական կրոնական համոզմունքներին չմիջամտելու իրավունքը: Ուստի, գանգատը համարվեց ակնհայտորեն անհիմն և անընդունելի: Նմանատիպ մոտեցում է ցուցաբերվել ուսուցիչների հագուկապի հետ կապված գործում[229]:

227 ՄԻԵԴ, *Քեմփբելը և Կոսաննն ընդդեմ Միացյալ Թագավորության [Campbell and Cosans v. UK]* (թիվ 7511/76 և 7743/76), 25 փետրվարի 1982թ., կետ 36:

228 ՄԻԵԴ, *Կյոզը և այլոք ընդդեմ Թուրքայի [Köse and others v. Turkey]* (dec.) (թիվ 26625/02), 24 հունվարի, 2006թ.:

229 ՄԻԵԴ, *Դահլաբն ընդդեմ Շվեյցարիայի [Dahlab v. Switzerland]* (dec.) (թիվ 42393/98), 15 փետրվարի, 2001թ.